ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3 (42)

2020 թ. նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նիստ՝ հարցման ընթացակարգով:

Խմբագրական խորհրդի բոլոր անդամներին ուղարկվեցին հետևյալ բովանդակությամբ գրություններ.

«Հարգելի պարոն/տիկին…

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2020 թ. № 3-ի բովանդակության հաստատմանը նվիրված խմբագրական խորհրդի նիստն անցկացնում ենք հարցման ընթացակարգով:

Խնդրում ենք գրավոր կամ բանավոր հայտնել Ձեր կարծիքը:

Կից՝ 2 թերթ»:

Հարցմանը գրավոր արձագանքեցին՝ Լ. Զեքիյանը, Ա. Դոլուխանյանը, Ս. Մուրադյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Աբրահամյանը, Գ. Բարդակչյանը, Ա. Տերյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը:

Հարցմանը բանավոր արձագանքեցին՝ Ա. Մելքոնյանը, Ն. Հովհաննիսյանը, Վ. Դևրիկյանը, Մ. Հասրաթյանը:

Խմբագրական խորհրդի անդամները հայտնեցին որոշ նկատառումներ, կատարեցին դիտարկումներ՝ մասնավորապես տպագրվելիք հոդվածների վերնագրերի հետ կապված:

Որոշվեց հաստատել հանդեսի 2020 թ. № 3-ի բովանդակությունը:

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր Ա. Զաքարյան